

**ՓՈԽՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՎ ՉԺՀ ՀԱՅՆԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետ Տիգրան Պետրոսյանի՝ մի կողմից, և ՉԺՀ Հայնան նահանգի ղեկավարությունը, ի դեմս Շեն Սյամոին՝ մյուս կողմից (միասին այսուհետև՝ Կողմեր), նպատակ ունենալով ՀՀ Շիրակի մարզի և ՉԺՀ Հայնան նահանգի միջև հաստատել բարեկամական հարաբերություններ, տնտեսական, գիտական, տեխնիկական, մարդասիրական և մշակութային ոլորտներում ամուր համագործակցություն, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզը և ՉԺՀ Հայնան նահանգը ճանաչել քույր տարածաշրջաններ, այսպիսով ամրապնդելով երկու երկրների ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունները, կնքում են սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետև՝ Հուշագիր) հետևյալի մասին՝

Հոդված I

Կողմերը համագործակցելու են իրենց լիազորությունների շրջանակներում՝ համաձայն երկու երկրների ներկայիս օրնսդրական պահանջների, ինչպես նաև հիմնվելով փոխըմբռնման, հարգանքի, վստահության և հավասարության սկզբունքների վրա:

Հոդված II

Կողմերը համագործակցելու են հետևյալ ոլորտներում՝
առևտրատնտեսական հարաբերություններ
գյուղատնտեսություն և սննդի արդյունաբերություն
զբոսաշրջություն
բժշկություն
հանքարդյունաբերություն
քաղաքաշինություն
էներգետիկա
կրթություն, գիտություն, մշակույթ

Հոդված III

Կողմերը ստանձնում են հետևյալ պարտավորությունները

- Աջակցել Կողմերի պաշտոնական պատվիրակությունների փոխանակման այցերի կազմակերպմանը, որը նպատակ է ունենալու ուսումնասիրել տեղական իշխանությունների փորձառությունը
- Տեղեկություններ փոխանակել տարածաշրջանային կայուն զարգացման, նորարական տեխնոլոգիաների կիրառման բնագավառներում ունեցած լավագույն փորձի վերաբերյալ
- Քայլեր ձեռնարկել՝ քաղաքների պատմությանը, մշակույթին և ավանդույթներին ծանոթանալու համար

Հոդված IV

Տնտեսության և առևտրի բնագավառում Կողմերը համագործակցելու են հետևյալ ուղղություններով՝

Խթանել առևտրատնտեսական համագործակցությունը՝ ստեղծելով համապատասխան պայմաններ համատեղ բիզնեսի և ներդրումների համար

Իրենց լիազորությունների շրջանակներում Կողմերը նպաստելու են գործարար շրջանակների միջև ուղղակի շփումների հաստատմանը

Հոդված V

Կրթության բնագավառում Կողմերն իրականացնելու են աշակերտների և ուսուցիչների փոխանակման այցեր՝ նպատակ ունենալով ուսումնասիրել կրթության կազմակերպման, աշակերտների համար համապատասխան պայմանների ստեղծման, կրթական մեթոդների բարելավման փորձառությունը, ինչպես նաև ծանոթանալ քաղաքների պատմամշակութային ժառանգությանը:

Հոդված VI

Զբոսաշրջության բնագավառում Կողմերը համագործակցելու են հետևյալ ուղղություններով՝

Զարգացնել Կողմերի միջև հնարավոր զբոսաշրջային ուղղությունները

Զբոսաշրջային կազմակերպությունների, հյուրանոցների և ՋԼՄ-ների ներկայացուցիչների այցելությունների կազմակերպում

Հոդված VII

Մշակույթի, երիտասարդական քաղաքականության և սպորտի բնագավառում Կողմերը համագործակցելու են հետևյալ ուղղություններով՝

Խթանել ստեղծագործ խմբերի և մշակույթի գործիչների մասնակցությունը տարբեր միջոցառումներին և համատեղ մշակութային գործողություններին

Աջակցել արվեստագետների, արհեստագործների և զարդագործների ցուցահանդեսների կազմակերպմանը

Խթանել հաղորդակցությունը ռադիոյի, կինոյի և հեռուստատեսության բնագավառներում և նպաստել համացանցի միջոցով տեղեկությունների փոխանակմանը՝ Նպաստել երկու Կողմերի սպորտային կազմակերպությունների միջև կապերի հաստատմանը, ինչպես նաև խթանել երիտասարդ մարզիկների մասնակցությունը սպորտային միջոցառումներին

Հոդված VIII

Սույն Հուշագրի իրականացումը խթանելու համար Կողմերի պատվիրակությունները կամ անհատ ներկայացուցիչները կարող են անցկացնել երկկողմ հանդիպումներ,

բանակցություններ կամ այլ գործողություններ:

Հոդված IX

Սույն Հուշագիրը միջազգային պայմանագիր չէ և չի առաջացնում միջազգային իրավունքով կարգավորվող իրավունքներ և պարտականություններ:

Հոդված X

Կողմերի համաձայնությամբ սույն Հուշագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել առանձին արձանագրությամբ՝ համաձայն Հոդված 11-ի:

Հոդված XI

Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է այնքան ժամանակ քանի դեռ Կողմերը չեն դադարեցրել այն՝ առանձին երկկողմ համաձայնագրի ստորագրման կամ Հուշագրի դադարեցումից առնվազն վեց ամիս առաջ դրա մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելու միջոցով:

Սույն Հուշագրի դադարեցումը չի անդրադառնում դրա կիրառման ընթացքում Կողմերի միջև կնքված այլ համաձայնագրերով և պայմանագրերով ստանձնած պատասխանությունների կատարմանը:


Սույն Հուշագիրը կնքվել է 2019 թվականի դեկտեմբերի 13-ին, այն կազմված է 3 լեզուներով՝ հայերեն, չինարեն և անգլերեն: Լեզուների միջև անհամապատասխանությունն առաջանալու դեպքում առաջնահերթությունը կտրվի անգլերեն տարբերակին:

ՀՀ Շիրակի մարզպետարան

ՀՀ Հայնան նահանգի ղեկավարություն



Տիգրան Պետրոսյան
Շիրակի մարզպետ



Շեն Սյաոմին
Հայնանի նահանգապետ

该合作报告书不是一项国际条约，不会产生受国际法管辖的权利和义务。

条款十

经双方同意，本合作报告书可作修改和补充，并以单独的书面形式补充，作为本报告书不可分割的一部分，并根据本报告书条款十一生效。

条款十一

本报告书自签署之日起生效，有效期至双方通过相互协议或应一方的要求书面通知另一方后终止，但不得迟于其终止时间的六个月前。

本报告书的终止不影响双方履行本报告书期限内签署的合同，协议，方案协议等的义务。


本协定于 2019 年 12 月 13 日达成，一式三份，以亚美尼亚语，中文和英文书写。如对本报告书的规定有不同的解释，应以英文为准。

亚美尼亚共和国希拉克州政府

中华人民共和国海南省政府



希拉克州州长
Petrosyan Tigran



海南省省长
沈晓明

participation of delegations and individual representatives of the Parties.

Article IX

This Memorandum is not an international Treaty and does not create rights and obligations governed by international law.

Article X

By the agreement of the Parties, this Memorandum can be amended and supplemented as a separate protocol, in accordance with Article 11 of this Memorandum.

Article XI

This Memorandum shall come into force on the date of signing and shall be valid until the Parties terminate it by mutual agreement or by written notice to the other party at the request of one party, but no later than six months before its termination.

The termination of this report shall not affect the obligations of both parties to perform the contract, agreement, scheme agreement, etc. signed during the period of this report.


This Memorandum is made in Dec. 13th, 2019 in triplicate in Armenian, Chinese and English. If there are different interpretations of the provisions of this report, the English version shall prevail.

**Government of Shirak Region of
the Republic of Armenia**



**Tigran Petrosyan
Governor of Shirak Region**

**Government of Hainan Province of
the People's Republic of China**



**Shen Xiaoming
Governor of Hainan Province**